

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

**023102.01.7 «ՌՈՒՄԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԷ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ**

սովորող ուսանողների համար

Վանաձոր

2016թ.

Բովանդակություն

Նախաբան.....	3
ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	
I. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները.....	4
II. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսական ծրագրի աշխատանքային ծավալը.....	5
III. Մագիստրոսի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները... ..	6
IV. Կրթական ծրագրի ուսումնական հատված.....	7
4.1. Ընդհանուր դասընթացներ.....	7
4.2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ.....	8
4.3. Կամրնտրական դասընթացներ.....	9
4.4. Գիտահետազոտական աշխատանք	10
4.5. Ավարտական պահանջներ.....	10
4.5.1. Ընդհանուր ավարտական պահանջներ.....	10
4.5.2. Մասնագիտական ավարտական պահանջներ.....	10
5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը.....	11
5.1. Համակարգի հիմնադրույթները.....	11
5.2. Գնահատման մեթոդաբանությունը.....	11
5.3. Կիրարկման ընթացակարգը.....	14
5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը.....	15
6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը.....	15
7. Ուսման առաջադիմությունը.....	17
8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը.....	17
9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը.....	18
10. Կրեդիտների փոխանցումը.....	19
11. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտականությունները.....	19
12. Ուսանողի իրավունքներն ու արտականությունները.....	20
ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ	
Տեղեկագրքի նպատակը.....	21
031000«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագրք	
1. Ընդհանուր դասընթացների կրթամաս.....	21
2. Մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամաս	23
3. Կամրնտրական դասընթացների կրթամաս.....	32
4. Այլ բաղադրիչներ.....	49

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր տարին մեր համալսարանի պատմության մեջ նշանավորվում է այս կամ այն իրադարձությամբ: 2014 –ը մեր համալսարանականացման տարին եղավ: 2015-ը նշանակալից էր երկու առումներով.

1. ՀՀ ԿԳ նախարարության ՈԱԱԿ-ի կողմից բուհն արժանացավ պետական հավատարմագրման 4 տարի ժամկետով: Այս ցուցանիշով մեր համալսարանը հանրապետության մարզային բուհերի մեջ առայժմ միակն է:

2. Առաջին անգամ կատարվեց ընդունելության քննություն համալսարանական մասնագիտություններով:

Անշուշտ, սրանից հետևում են բազմաշերտ բովանդակային փոփոխություններ և դրանցից բխող մարտահրավերներ, որոնց այսօր փորձում է դիմակայել մեր համալսարանը:

Բուհում առաջին հերթին փոփոխվել են այն ուղղությունները, որոնք նախկինում գերակայում էին մեր բուհի պատմության ողջ ընթացքում: Ասվածից դժվար չէ ենթադրել, որ ներկայումս վերանայման խնդիր ունեն համալսարանի տեսլականն ու առաքելությունները և դրանցով պայմանավորված հետագա գործունեությունը:

Մեր բուհին առաջին անգամ հնարավորություն է ընձեռվել կրթություն իրականացնելու համալսարաններին հատուկ ավանդական մասնագիտություններով, ինչը հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բավարարելու մեր տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքները:

Այն ժամանակաշրջանը, որում Վանաձորի պետական համալսարանը ծավալում է իր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին հատուկ գծերով: Այդ է պատճառը, որ ամեն մի քայլ, որը կատարվում է համալսարանում, պետք է ավելի քան հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Խոսքը վերաբերում է համալսարանում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, մասնավորապես՝ բուհի ինքնավարությանը, որը ենթադրում է անկաշկանդ վերաբերմունք կազմակերպչաիրավական, ֆինանսատնտեսական, հաստիքային և ակադեմիական ոլորտներին, կառավարմանը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպմանը, որակի ապահովմանը, գիտական գործունեությանը և այլ ուղղություններին միտված գործողություններին, որոնք այսօր կատարվում են համալսարանում, և որոնք բոլորը միասին ձևավորում են տեսլականից դեպի իրականը տանող ճանապարհը:

Համոզված եմ, որ Վանաձորի պետական համալսարանն ունի մտավոր և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց ճիշտ ներդրմամբ կարելի է հասնել հաջողության: Համոզված եմ, որ համախոհությամբ, փոխադարձ հանդուրժողականությամբ, ինչպես նաև պետության ու հասարակության առջև հաշվետվողականությամբ ու պատասխանատվությամբ առաջնորդվելու դեպքում միասին կհաղթահարենք արդի ժամանակաշրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

ՌԵԿՏՈՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՍ I. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. Կրեղիտային համակարգի հիմնադրույթները

Կրեղիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեղիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

Կրեղիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեղիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեղիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակը,
- կրեղիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեղիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և տեղեկատվական այլ նյութեր հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ՎՊՀ կայքէջում):

Ակադեմիական կրեղիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա էլքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

Ակադեմիական ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային և արտալսարանային (նաև ինքնուրույն իրականացվող) բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանց հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- Լսարանային բեռնվածություն- ուսումնական աշխատաժամանակի բաղադրիչ, որն ընդգրկում է ուսումնառության կազմակերպման լսարանային ձևերի բոլոր տեսակները՝ դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ:
- Արտալսարանային բեռնվածություն - ուսանողի կողմից ինքնուրույն կամ դասախոսի հսկողությամբ կատարվող աշխատանքի համար հատկացվող ժամանակ՝ հանձնարարված գրականությունն ուսումնասիրելու և մշակելու, գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքներին, ընթացիկ և կիսամյակային քննություններին նախապատրաստվելու, կուրսային, դիպլոմային աշխատանքները կատարելու համար:
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին հատկացվում է միայն կրթական մոդուլով նախանշված էլքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործություն չկա:

II. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսական ծրագրի աշխատանքային ծավալը

1. ՎՊՀ-ում մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր, ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):

2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

3. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածությունը գնահատվում է 1,5 կրեդիտային միավորով, ինչը կազմում է 45 ակադեմիական ժամ (40 րոպե տևողությամբ պարապմունքների դեպքում՝ 51 ակադեմիական ժամ):

4. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով (աշնանային և գարնանային):

5. 1-3-րդ ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 19 շաբաթ, որից տեսական ուսուցում՝ 16 շաբաթ, քննաշրջան՝ 3 շաբաթ: 4-րդ կիսամյակի տևողությունը 20 շաբաթ է (8 շաբաթ՝ տեսական ուսուցում, 2 շաբաթ՝ գիտահետազոտական պրակտիկա, 4 շաբաթ՝ գիտամանկավարժական պրակտիկա, 1 շաբաթ՝ քննաշրջան, 5 շաբաթ՝ մագիստրոսական թեզի նախապատրաստում և պաշտպանություն):

6. Մագիստրոսի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 15-22 ժամ:

7. Մագիստրատուրայի համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

8. Մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 120 կրեդիտային միավոր:

9. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

10. Դասընթացները և կրթական մոդուլները

10.1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

10.2. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

10.3. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են երկու հիմնական խմբերի՝

ա) պարտադիր դասընթացներ - բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ (կրթական մոդուլներ), որոնք յուրացվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին:

բ) կամընտրական դասընթացներ, որոնք լրացնում են հիմնական կրթական ծրագիրը՝ մագիստրանտների մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները տվյալ մասնագիտացման կոնկրետ ոլորտում խորացնելու, շարունակական կրթության և տվյալ մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանին նախապատրաստելու նպատակով:

Կամընտրական դասընթացների քանակը չպետք է լինի երեքից պակաս:

Դասընթացների ցանկն առաջարկում են համապատասխան ամբիոնները: Այն հաստատվում է գիտխորհրդի կողմից՝ ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի (ամբիոնի) ներկայացմամբ:

Կամընտրական դասընթացների անցկացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

III. Մագիստրոսի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

3.1. Մագիստրոսի կրթական ծրագիրը բաղկացած է երկու հիմնական հատվածներից՝ ուսումնական ծրագրից և գիտահետազոտական աշխատանքից: Ուսումնական ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական կրթամասերից՝

- Ընդհանուր դասընթացներ,
- Մասնագիտական պարտադիր դասընթացներ,
- Կամընտրական դասընթացներ:

Կրթական ծրագրի գիտահետազոտական կրթամասը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- Մագիստրոսական ծրագրի ղեկավարի սեմինար,
- Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական թեզի թեմայով,
- Գիտահետազոտական պրակտիկա,
- Գիտամանկավարժական պրակտիկա,
- Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն:

Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթացն ունի իր դասիչը: Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր խմբին, ինչպես նաև յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը, ինչպես նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

Ուսումնական ծրագրի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.

h/h	Կրթական ծրագրի բաղադրամասը	Կրեդիտներ	Դասընթացների քանակը
1	Ընդհանուր դասընթացներ	6	2
	-պարտադիր	6	2
2	Մասնագիտական պարտադիր դասընթացներ	44	10
3	Կամընտրական դասընթացներ	22	5
	-փիլիսոփայությունից	3	1
	-ռուսաց լեզվից	10	2

	-ռուս գրականությունից	9	2
4	Գիտահետազոտական աշխատանք, որից՝	48	
4.1	Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար	12	
4.2	Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով	15	
4.3	Գիտահետազոտական պրակտիկա	3	
4.4	Գիտամանկավարժական պրակտիկա	6	
4.5	Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն	12	
Ընդամենը		120	

4. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՊՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

4.1. Ընդհանուր դասընթացներ

Տվյալ ենթաբաժնի դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

Առարկայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանային ժամ (դ/ս/գ/լ) ¹	Ինքնուրույն աշխատանքի	Կիսամյակ	Գնահատման ձևը
---------------	-----------------	--------	---------------------	---------------------------------------	-----------------------	----------	---------------

¹ դ-դասախոսություն, ս-սեմինար, գ-գործնական պարապմունք, լ-լաբորատոր աշխատանք

					Ժամա- քանակ		
ԻՏՄՄ/մ- 0673	<i>Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում</i>	3	90	32 (4/0/28/0)	58	1	<i>ստուգարք</i>
ՌՎ/մ- 0094	<i>Մասնագիտության արդի հիմնախնդիրները¹</i>	3	90	32(20/12/0/0)	58	1	<i>ստուգարք</i>

4.2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

«Ռուսաց լեզու և գրականություն» մագիստրոսական ծրագրի մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամասի փաթեթը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

Առար- կայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Ընդհա- նուր Ժամա- քանակ	Լսարա- նային ժամ (դ/ս/գ/լ) ¹	Ինքնու- րույն աշխա- տանքի Ժամա- քանակ	Կի- սամ- յակ	Գնահատ- ման ձևը
Գ/մ- 0233	<i>Ռուս գրականության արժաթե դարը</i>	5	150	54(28/0/26/0)	96	1	<i>քննություն</i>
Գ/մ- 0224	<i>Գրականագիտական և գեղագիտական կատեգորիաներ</i>	4	120	36(18/0/18/0)	84	1	<i>քննություն</i>
Գ/մ- 0248	<i>Միմլոլիզմի լատենտային գոյությունը նորագույն շրջանի ռուս գրականության մեջ</i>	5	150	44(22/0/22/0)	106	2	<i>քննություն</i>
	<i>Գրականությունը համացանցում</i>	4	120	32(16/0/16/0)	88	2	<i>քննություն</i>
Գ/մ- 0247	<i>20-րդ դարի 60-ական թթ. «գյուղական արձակը. Վ.Ռասպուտին, Վ.Բելով, Վ.Շուկշին,</i>	4	120	40(24/0/24/0)	72	3	<i>քննություն</i>

	<i>Ֆ. Աբրամով</i>						
ՌԷ/Մ-0090	<i>Տեքստի բանասիրական վերլուծություն</i>	5	150	44(22/0/22/0)	106	1	<i>քննություն</i>
ՌԷ/Մ-0089	<i>Էթնոլեզվաբանություն</i>	4	120	44(24/0/20/0)	76	1	<i>քննություն</i>
	<i>Ռուսերենի շարահյուսությունը հաղորդակցական տեսանկյունից</i>	5	150	54(24/0/30/0)	96	2	<i>քննություն</i>
ՌԷ/Մ-0084	<i>Շարահյուսության արդիական հիմնահարցեր</i>	4	120	46(22/0/24/0)	74	3	<i>քննություն</i>
ՌԷ/Մ-0092	<i>Ժամանակակից լեզվաբանության հիմնահիմքեր</i>	4	120	46(22/0/24/0)	74	3	<i>քննություն</i>

4.3. Կամընրտական դասընթացներ

Պարտադիր մասնագիտական դասընթացների կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլներ*.

Առարկայի կոդը	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանային ժամ(դ/ա/գ/լ) ¹	Ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ	Կիսամյակ	Գնահատման ձևը
	<i>Լեզվաբանատրամաբանության ընդհանուր հարցեր</i>	3	90	30(20/0/10/0)	60	1	<i>ստուգարք</i>
	<i>Լեզվամտածողության հիմունքներ</i>						
ՌԷ/Մ-0091	<i>Անվանագիտություն</i>	5	150	44(22/0/22/0)	106	2	<i>ստուգարք</i>
ՌԷ/Մ-0091	<i>Գենդերային լեզվաբանություն</i>						
ՌԷ/Մ-0087	<i>Բառակազմության արդի հիմնահարցեր</i>						

ՌԷ/Մ-0086	Ռուսաց և հայոց լեզուների համեմատական տիպարանություն						
ՌԷ/Մ-0086	Տեքստի լեզվաբանական դիսկուրսը	5	150	60(30/0/30/0)	90	3	ստուգարք
	Իմաստաբանության հիմնախնդիրներ						
	20-րդ դարի լատինաամերիկյան գրականության ուրվագծեր						
	Միստիկան ռուս գրականության մեջ	5	150	44(22/0/22/0)	106	2	ստուգարք
	Կինոմատոգրաֆիկությունը որպես ժամանակակից գրականության զարգացման անհատական ոճի դոմինանտ						
	Վ.Նաբոկովի նշանի տակ. Դիմակ և աշխարհ						
	Ռուս արտագաղթի գրականության երրորդ ալիքը. Ս. Դովլատով, Ի. Բրոդսկի	4	120	48(26/0/22/0)	72	3	ստուգարք
	Հայ-ռուսական գրական կապեր						

*նշված առարկաներից ընտրվում է մեկ առարկա:

4.4. Գիտահետազոտական աշխատանք

Մագիստրոսական կրթական ծրագրի գիտահետազոտական հատվածն ընդգրկում է ամրագրված կրեդիտային միավորներով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար	12	1,2,3,4	ստուգարք
Գիտահետազոտական աշխատանք՝ մագիստրոսական ատենախոսության	3	2	քննություն

² Ներառում է 16-ական ժամ լսարանային սեմինար պարապմունքներ յուրաքանչյուր կիսամյակում:

<i>թեմայով (Կուրսային աշխատանք)</i>			
<i>Գիտահետազոտական աշխատանք՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով (Ռեֆերատ, զեկուցում)</i>	<i>3</i>	<i>3</i>	<i>ստուգարք</i>
<i>Գիտահետազոտական աշխատանք՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով</i>	<i>9</i>	<i>3,4</i>	<i>ստուգարք</i>
<i>Գիտահետազոտական պրակտիկա</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>ստուգարք</i>
<i>Գիտամանկավարժական պրակտիկա</i>	<i>6</i>	<i>4</i>	<i>ստուգարք</i>
<i>Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն</i>	<i>12</i>	<i>4</i>	<i>քննություն</i>

4.5. Ավարտական պահանջներ

4.5.1. Ընդհանուր ավարտական պահանջներ

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՀ մագիստրատուրայի ուսանողը պետք է հաջողությամբ յուրացնի 120 կրեդիտին համապատասխանող կրթական ծրագրի բոլոր բաղադրիչները, ընդ որում հաշվարկած միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58՝ ներառյալ մագիստրոսական թեզի ձևակերպումը և պաշտպանությունը:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրատուրայի ուսանողները պարտավոր են կուտակել.

- 6 կրեդիտ ընդհանուր դասընթացների կրթամասից,
- 3 կրեդիտ գիտահետազոտական պրակտիկայից,
- 6 կրեդիտ գիտամանկավարժական պրակտիկայից:

4.5.2. Մասնագիտական ավարտական պահանջներ

Մնացած 105 կրեդիտային միավորներից 39-ը տրամադրվում է մագիստրոսական կրթական ծրագրի «Գիտահետազոտական աշխատանք» կրթամասով նախատեսված բաղադրիչներին, իսկ 66 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բանասիրության մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներից և մասնագիտացման չափորոշիչներով սահմանված կարողությունների, հմտությունների և կոմպետենցիաների ձեռքբերման պայմանից, որն ապահովվում է ՄՊԴ և ՄԱ կրթամասերի (տե՛ս կետեր 4.2. և 4.3.) առաջարկվող առարկայացանկերով:

5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

5.1. Համակարգի հիմնադրույթները

ՎՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, իրանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ) անհատական առաջադրանքների և ընթացիկ ստուգումների (քննությունների) օգնությամբ բարելավել դասընթացի արդյունարար գնահատման արժանահավաստությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնական գործընթացի մի շարք բաղադրիչների և դրանց կարևորության աստիճանը:

Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի բաղադրիչներն են՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,

գ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության, հմտությունների և կարողությունների հաշվառում և գնահատում,

դ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգումներ),

ե) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

զ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական(սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

5.2. Գնահատման մեթոդաբանությունը

5.2.1. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (կրթական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի

մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,

բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:

Եզրափակիչ գնահատումով (քննությամբ) ավարտվում են ծրագրի մասնագիտական պարտադիր դասընթացների կրթամասի բոլոր առարկաները: Ընդհանուր և կամընտրական բոլոր դասընթացներն ավարտվում են ստուգարքով: Յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում ներառված են եզրափակիչ գնահատումով 2-4 մասնագիտական դասընթաց:

5.2.2. Եզրափակիչ քննությամբ ավարտվող առարկաների համար քննաշրջանի ընթացքում նախատեսվում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ քննությունները պարտադիր կերպով անցկացվում են գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը որոշում է դեկանը՝ ամբիոնի առաջարկությամբ:

5.2.3. Առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքով ավարտվող) դասընթացը կիսամյակի ընթացքում գնահատվում է նյութի յուրացման մակարդակը որոշող 2 (երկու) ընթացիկ ստուգումների արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրաքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականների ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը վարող ամբիոնը: Լաբորատոր աշխատանքներն ամփոփվում են կատարողական ստուգարքով:

5.2.4. Եզրափակիչ գնահատումով դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ_{մաս.}, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր: Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանը գնահատվում է հետևյալ սանդղակով.

Աղյուսակ 1.

Ուսանողի մասնակցության աստիճանի որոշման սանդղակ

Մասնակցության	Հատկացվող
---------------	-----------

աստիճանը (%)	միավորը
90-100	20
80-90	16
70-80	10
60-70	4
50-60	2
< 50	0

բ) Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ $Q_{ինք.}$, որին հատկացվում է 10 միավոր: Ինքնուրույն աշխատանքի ձևերից են ռեֆերատը, էսսեները, քեյսերը, թեմատիկ զեկուցումները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը և այլն: Եթե ինքնուրույն աշխատանքը կատարված է նշանակված ժամանակահատվածում և ուսանողը խմբի ներկայությամբ կարողանում է այն բանավոր ներկայացնել, ապա նա կարող է ստանալ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առավելագույն միավորը: Առանց բանավոր ներկայացման ուսանողը ստանում է նախատեսված միավորների կեսը:

գ) Գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունը, պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունը և հմտությունները ($Q_{սեմ.}$) գնահատվում են 20 միավորով: Գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են: Այդ պարապմունքների ընթացքում ուսանողի ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է մատյաններում՝ յուրաքանչյուր դասաժամին հատկացված միավորներով: Նշված պարապմունքներին հատկացված առավելագույն միավորները ուսանողները կարող են ստանալ այն դեպքում, եթե պատրաստվել և ակտիվորեն մասնակցել են դրանց:

դ) Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) դրական գնահատված քննությունների միջինի և եզրափակիչ քննության գումարային արդյունքից ($Q_{քնն.}$), որի առավելագույնը 20 միավոր է:

ե) Տվյալ դասընթացի (ուսումնական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունների ($Q_{հմտ.}$) և կարողությունների ($Q_{կար.}$) գնահատումից, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 15 միավոր: Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակված միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + Q_{ինք.} + Q_{սեմ.} + Q_{քնն.} + Q_{հմտ.} + Q_{կար.}$$

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 16 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 5 միավոր, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքները՝ 17 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից ուսանողը վաստակել է համապատասխանաբար 8 և 12 միավորներ, եզրափակիչ քննությանը՝ ընթացիկների միջինը (10) բարձրացրել է մինչև 16 միավոր, իսկ հնտություններն ու կարողությունները գնահատվել են համապատասխանաբար 8 և 10, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + Q_{ինք} + Q_{սեմ} + Q_{ըն.} + Q_{հմտ.} + Q_{կար.}$$

$$Q_{արդ.} = 16 + 5 + 17 + 16 + 8 + 10 = 72,$$

որն ըստ սույն տեղեկագրքի 4.4.1. կետում բերված աղյուսակի համապատասխանում է B- (լավ) գնահատականի:

5.2.5. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունաբար (կիսամյակային) գնահատականը (միավորը) ($Q_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Q_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 20 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն աղյուսակ 1-ում բերված սանդղակի:

բ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ $Q_{ինք.}$, որին հատկացվում է մինչև 10 միավոր:

գ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության ակտիվությունից ($Q_{սեմ.}$), որը գնահատվում է առավելագույնը 20 միավորով:

դ) ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռք բերված գործնական հմտությունների ու կարողությունների գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($Q_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + Q_{ինք.} + Q_{սեմ.} + Q_{ընթ.}$$

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 8 միավոր, ինքնուրույն աշխատանքները՝ 10 միավոր, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվությունը՝ 15 միավոր, իսկ դասընթացի համար նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 8, 10, 13 և 14 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝

$$Q_{արդ.} = 8 + 10 + 15 + 8 + 10 + 13 + 14 = 78:$$

Ուսանողը գնահատվում է S (ստուգված) (տես 4.4.1. կետի աղյուսակը):

5.2.6. Դասընթացների գնահատման վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն մասնագիտական դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: Մնացած բոլոր կրթամասերի բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 100 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն):

5.2.7. Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով:

5.2.8. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ երկօրյա ժամկետում դիմելու դասընթացը վարող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

5.3. Կիրարկման ընթացակարգը

5.3.1. Ընթացիկ և եզրափակիչ ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

5.3.2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

5.3.3. Ընթացիկ քննություններն անցկացվում են ուսումնառության կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում:

5.3.4. Ստուգարքով ավարտվող առարկաների ընթացիկ ստուգումներն անցկացվում են յուրաքանչյուր 4 շաբաթը մեկ: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):

5.3.5. Եզրափակիչ քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18-20-րդ շաբաթներում:

5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

5.4.1. ՎՊՀ-ում մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Գնահատականը ըստ	5	Գնահատականը ըստ	100	Գնահատականը ըստ	
-----------------	---	-----------------	-----	-----------------	--

բալանոց համակարգի	միավորանոց սանդղակի	ECTS համակարգի
«գերազանց (5) և	96-100	A+
« գերազանց և (5)	91-95	A
« գերազանց և (5)	86-90	A-
« լավ և (4)	81-85	B+
« լավ և (4)	76-80	B
« լավ և (4)	71-75	B-
« բավարար և (3)	67-70	C+
« բավարար և (3)	62-66	C
« բավարար և (3)	58-61	C-
« անբավարար և (2) ¹	30-57	D
« Անբավարար և (2) ²	մինչև 30	F
« ստուգված և	58-100	S
« չստուգված և ¹	30-57	U
« չստուգված և ²	մինչև 30	U

¹ Թույլատրվում է մասնակցել քննության պարտքերի մարմանը

² Չի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը:

5.4.2. Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը, օրինակ՝ 87 (գերազանց):

5.4.3. Այն դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է՝ չստուգված, կրեդիտներ չեն տրվում: Ստուգված գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

6.1. Մագիստրատուրայի ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ՎՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

6.2. Մագիստրատուրայի ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

6.3. Մագիստրատուրայի ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և միջև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

Ծրագրային կրեդիտների (**ԾԿ**) քանակը

Գնահատման կրեդիտների (**ԳԿ**) քանակը

Վարկանիշային միավորները (**ՎՄ**)

Միջին որակական գնահատականը (**ՄՈԳ**)

6.4. Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

6.5. Գնահատման կրեդիտը (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$\mathbf{ԳԿ} = \mathbf{\Sigma Կրեդիտ}$$

6.6. Վարկանիշային միավորը (ՎՄ) ուսանողի՝ յուրաքանչյուր առարկայի համար գնահատման ECTS համակարգով ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար ECTS գնահատականների արտադրյալների գումար.

$$\mathbf{ՎՄ} = \sum_{i=0}^k (\mathbf{ԳԿ} \times \mathbf{\thetaԳ}) ,$$

որտեղ $\thetaԳ$ -ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS գնահատականն է: Օրինակ, եթե 5-կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 72 (ECTS-համակարգում՝ B- լավ), ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5 կրեդիտ $\times 72 = 360$ ՝ 500 հնարավորից:

6.7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ուսանողի՝ բոլոր առարկաների համար գնահատման ECTS համակարգով ստացած գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\mathbf{ՄՈԳ} = \frac{\mathbf{ՎՄ}}{\mathbf{\Sigma ԳԿ}}$$

6.8. Մագիստրատուրայի ուսանողի կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունաբար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը հաշվառվում և գրանցվում են ակադեմիական տեղեկագրում:

7. Ուսման առաջադիմությունը

7.1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:

7.2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածության (10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,

գ) ապահովել է բակալավրի կրթական աստիճանում ուսանողի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը (58 միավոր):

7.3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:

7.4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:

7.5. Մագիստրոսի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանին:

7.6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:

7.7. Ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են նրանց վարկանիշային միավորների օգնությամբ:

7.8. Ուսանողի բացարձակ առաջադիմությունը չափվում է միջին որակական գնահատականով:

8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

8.1. Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

8.2. Հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը հաշվի չեն առնվում դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը

որոշելիս, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

8.3. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

8.4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը (ստուգումը) ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապող դասախոսի հետ:

8.5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

8.6. Եզրափակիչ քննությունից՝ անբավարար՝ (8 միավորից ցածր) գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը ցածր է՝ բավարար՝ գնահատականից (գտնվում է 30-57 միջակայքում):

8.7. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, սակայն չեն կարող վաստակել ավելի, քան անցողիկ 58 միավորը:

8.8. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

9.1. Մագիստրատուրայի ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) կատարումով ու պաշտպանությամբ:

9.2. Մագիստրոսական թեզով նախատեսված աշխատանքները կատարվում են ուսումնառության 2-4 կիսամյակներում՝ ստացված գիտելիքների և գործնական հմտությունների հիման վրա՝ բուհում սովորելու ընթացքում (4 տարի բակալավր, 2 տարի մագիստրոս):

Մագիստրոսական ատենախոսության թեմաները և ղեկավարները որոշվում են թողարկող ամբիոնի կողմից՝ ըստ մագիստրոսական ծրագրերի ուղղությունների, համաձայնեցվում մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ, քննարկվում ֆակուլտետի

ուսումնամեթոդական խորհրդում և ուսումնառության առաջին կիսամյակի վերջում առաջարկվում ուսանողներին:

Մագիստրատուրայի ուսանողը առաջին կիսամյակի վերջին գրավոր դիմում է ներկայացնում համապատասխան թողարկող ամբիոնի վարիչին՝ մագիստրոսական ատենախոսության թեման և ղեկավարի հաստատման խնդրանքով:

9.3. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) թեզի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսման ուղարկելու կազմակերպում,

դ) մագիստրոսական թեզի պաշտպանություն պետական քննական հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

9.4. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը գնահատվում է ըստ 5.4.1. կետում ներկայացված 100-բալանոց սանդղակով:

9.5. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման հետևյալ միավորները.

Թիվ	Չափանիշ	Հատկացվող առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	30
2	Ձևակերպման որակը	20
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	30
4	Արդիականությունը (նորույթը)	20
	Ընդամենը	100

10. Կրեդիտների փոխանցումը

10.1. Այլ բուհերից ՎՊՀ-ի մագիստրատուրայի կրթական ծրագիր փոխադրվելու դեպքում փոխանցելի են տվյալ բուհում առանձին դասընթացներից, դասընթացների խմբից, կամ ուսումնառության որոշակի շրջանից կուտակված կրեդիտները: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ և ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

10.2. Այլ ուսումնական ծրագրից ՎՊՀ մագիստրոսի ուսումնական ծրագիր կրեդիտների փոխանցումը հնարավոր է, եթե.

ա) փոխանցվող կրեդիտները կուտակվել են ՎՊՀ մագիստրոսական ծրագրի բաղադրիչներին համապատասխանող դասընթացներից և այլ կրթական մոդուլներից,

բ) կան կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

10.3. Այլ բուհում ՎՊՀ մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնարի առարկա՝ ուսանողի, ՎՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

10.4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման հարցերով զբաղվում է ՎՊՀ-ի ուսումնամեթոդական վարչությունը:

11. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտականությունները

11.1. Կրեդիտային համակարգով մագիստրատուրայում սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը նշանակում է մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներից:

11.2. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը պատասխանատու է մագիստրոսի պատրաստման որակի համար:

11.3. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը վերահսկում է մագիստրոսական ուսումնական պլանի մշակումը, մասնակցում է դրա մասնագիտական առարկայախմբի բովանդակության ձևավորմանը, վարում է ուսումնական պլանով նախատեսված մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարը, անցկացնում է այդ սեմինարի պլանին և ծրագրին համապատասխանող ուսումնական պարապմունքներ, վերահսկում է մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքի կատարումը:

11.4. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը իրականացնում է մագիստրոսական ծրագրի ուսումնական և գիտահետազոտական հատվածների կատարման և

մագիստրատուրայի գիտական ղեկավարների գործունեության վերահսկողությունը, կազմակերպում է մագիստրոսական թեզերի թեմաների փորձաքննական գնահատում:

11.5. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը ներկայացնում է ուսանողի շահերը Համալսարանի տարբեր ստորաբաժանումներում, կազմակերպում է խմբային և անհատական խորհրդատվություններ ուսանողների համար՝ ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր հարցերի շուրջ:

12. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

12.1. Մագիստրատուրայի ուսանողը պարտավոր է.

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

12.2. Ուսանողն իրավունք ունի.

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Ինստիտուտի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) սովորելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի ECTS հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է բանասիրական ֆակուլտետում իրականացվող ռուսաց լեզվի և գրականության մագիստրոսի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին,

ինչպես նաև լայն հասարակությանը մատչելի դարձնելու համար: Տեղեկագիրքը պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և աստեսավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված էլքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

032400 «Ռուսաց լեզու և գրականությունե մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք

1. Ընդհանուր դասընթացների (ԸԴ) կրթամաս (6 կրեդիտ)

1.1. ԻՏՄՄ/մ-0677

Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (4 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական),

1-ին կիսամյակ, ստուգաթք

Նպատակը

- ✓ Ուսանողներին զինել բանասիրական գիտությունների բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով:
- ✓ Խորացնել և ընդլայնել ուսանողների՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքները:
- ✓ Ուսանողներին տալ գաղափարներ՝ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների ու ինֆորմացիոն համակարգերի, դրանց աշխատանքի սկզբունքների, ինչպես նաև մարդկային գործունեության տարբեր ոլորտներում կիրառության վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

✓ կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել պրակտիկ խնդիրներ լուծելիս,

✓ կկարողանա տիրապետել ինֆորմացիոն որոնողական համակարգերի կիրառության մեթոդներին:

Բովանդակությունը.

Ինֆորմացիոն տեխնոլոգիաները, նրանց բնույթը, զարգացման հիմնական փուլերը:

Թեմա 1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ: Հիմնական գաղափարներ ու հասկացություններ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման հիմնական պատմական էտապներն ու ժամանակակից մակարդակը:

Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեխնիկական, մեթոդոլոգիական ու կիրառական հիմունքները: Ինֆորմացիոն տեխնոլոգիաներն ու կիրառական, ինֆորմատիկական ու հաշվողական տեխնիկան:

Ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաներն ըստ նրանց կիրառության հիմնական բնագավառները

Թեմա 1. Ինֆորմացիոն որպես ինֆորմացիոն տեխնոլոգիաների կարևորագույն բաղկացուցիչ մաս, նրա ձևավորման, կարգավորման, կազմակերպման, մշակման, հաղորդման ու պահման մեթոդներն ու եղանակները:

Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը հասարակական գործունեության տարբեր բնագավառներում (գիտություն, արտադրություն, կրթություն, տրանսպորտ ու կապ, բիզնես, մարքեթինգ և այլն):

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության և մասնագիտական տարբեր ոլորտներում

Թեմա 1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության պրոցեսի կառավարման ու կազմակերպման գործում:

Թեմա 2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը տվյալ մասնագիտության գծով հեռաուսուցման, ծրագրավորված և էլեկտրոնային ուսուցման կազմակերպման գործում:

Թեմա 3. Ուսուցման և գիտելիքների գնահատման համակարգչային ավտոմատացված ուսուցանող համակարգեր:

Թեմա 4. Բանասիրական գիտությունների բնագավառի որոշ տվյալների ու գիտելիքների բազաների նախագծումը, մշակումն ու շահագործումը:

Թեմա 5. Ինֆորմացիոն ցանցեր և դրանցում ինֆորմացիայի կազմակերպման ու որոնման եղանակները: INTERNET միջազգային գլոբալ ինֆորմացիոն ցանցն ու նրանում ինֆորմացիայի որոնման համակարգերը:

1.2. ՌԼ/մ- 0084

Մասնագիտության արդի հիմնախնդիրները (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար, 1-ին կիսամյակ, ստուգարք)

Նպատակը

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ժամանակակից ռուսագիտության հիմնահարցերին, տալ պատկերացումներ ռուսաց լեզվի վիճահարույց որոշակի հիմնահարցերի, դրանց լուծման գիտական և մեթոդական առաջարկների մասին:

Կրթական արդյունքները.

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կատանա գիտելիքներ՝ դետերմինանտների, Սեպիր-Ուորֆի և Ֆոն Հումբոլդտի աշխարհապատկերման կոնցեպտուալ տեսությունների, նախադասության իմաստաբանական կառուցվածքի մասին,
- ✓ ձեռք կրերի կարողություններ և հմտություններ՝ օգտագործելու ստացած գիտելիքները գործնական, գիտական և մեթոդական բնագավառներում,
- ✓ կկարողանա լեզվաաշխարհապատկերման մոդելները կիրառել միջմշակութային հաղորդակցության ժամանակ:

Բովանդակություն

Թեմա 1. Ձևաբանության դժվար հարցեր: Վերադաշնակումը որպես ձևաբանության արդյունավետ երևույթ:

Թեմա 2. Խոսքի մասերի դասակարգման սկզբունքները. Ավանդույթներ և նորարարություններ: Խոսքի հիբրիդային մասեր:

Թեմա 3. Նախադասության ձևական կազմակերպումը. Կառուցվածքային մինիմալ սխեման, նախադասության հարացույցը, նրա կանոնավոր իրականացումը:

Թեմա 4. Դետերմինանտներ: Նախադասության երկրորդական անդամներ. Ավանդույթներ և նորարարություններ: Նախադասության ենթակայական և խնդրառական տարածիչներ:

Թեմա 5. Նախադասության հրատապ մասնատումը. Թեման և ռեման:

Թեմա 6. Նախադասության իմաստային կազմակերպումը: Նախադիրքային անվանականության մասին հասկացությունը; Իմաստաբանական սուբյեկտը և նրա իմաստաբանական ստորոգյալը:

Թեմա 7. Եղանակավորությունը բառագիտական և շարահյուսական մակարդակներում: Մոդուսը և դիկտումը նախադասության իմաստաբանական դաշտում:

Թեմա 8. Տեքստը և խոսույթը: Տեքստուալությունը և նրա չափորոշիչները (Մ.Ա. Կրոնգաուզ):

Թեմա 9. Աշխարհի լեզվապատկերում: Աշխարհի հասկացությունը լեզվի միջոցով (Վ. Ֆոն Հումբոլդտ, Նորահումբոլդտականություն, Մեյիթ-Ուորֆի վարկածը):

Թեմա 10. Պերֆորմատիվներ և պերֆորմատիվ վարկած: Ներքին իմաստներ:

Թեմա 11. Դասավանդման նորարարական մեթոդներ (ձևական և ոչ ձևական): Ուսուցման ինտենսիվ և ինտերակտիվ տեխնոլոգիաներ:

Թեմա 12. Անընդմեջ կրթության հայեցակարգը: Հետադարձ կապի տեխնոլոգիաներ:

Թեմա 13. Բոլոնյան գործընթաց. Հարացույցի փոփոխությունը որակավորման մեթոդից դեպի կոմպետենտայնություն:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱՄԱՍ (ՊԴ)

2.1. Գ/մ-0233

Ռուս գրականության արծաթե դարը (5 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (28 ժամ դասախոսություն, 26 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, քննություն)

Նպատակը

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել պատկերացումներ 20-րդ դարի սկզբի գրական դարաշրջանի, նրա գեղագիտական, մշակութաբանական նորարարության մասին: Բնութագրել հիմնական ուղղությունները, դպրոցները, մեթոդները, տալ պատկերացումներ մշակութային հարացույցի փոփոխության մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կուսումնասիրի Արծաթե դարի կարևորագույն գրական ստեղծագործությունները, կիստակեցնի դրանց տիպաբանական կապերը որոշ գեղագիտական ուղղությունների հետ,
- ✓ կձանոթանա արդի գրականագիտական նոր տերմինների և հասկացությունների հետ,
- ✓ կձանոթանա 20-րդ դարի գրականության տեսությանը և մեթոդաբանությանը բնորոշ գեղարվեստական տեքստի վերլուծության առանձնահատկությունների հետ:

Բովանդակություն

Թեմա 1. Վ. Բրյուսովի և Ա. Բլոկի ստեղծագործությունները:

Թեմա 2. Դ. Մերեժկովսկու, Ֆ. Սոլոգուբի, Ա. Բելիի ստեղծագործությունները:

Թեմա 3. Ի. Աննենսկու, Կ. Բալմոնտի, Ջ. Գիպպիուսի, Վ. Իվանովի ստեղծագործությունները:

Թեմա 4. Ն. Գումիլյովի, Ա. Ախմատովայի, Օ. Մանդելշտամի ստեղծագործությունները:

Թեմա 5. Ի. Սևերյանինի, Վ. Խլեբնիկովի ստեղծագործությունները:

Թեմա 6. Ի. Բուրյուկի, Վ. Կամենսկու, Ա. Կրուչոնիխի ստեղծագործությունները:

Թեմա 7. Ի. Բունինի, Ա. Կուպրինի, Մ. Գորկու, Ի. Շմելյովի, Ե Զամյատինի ստեղծագործությունները:

2.2. Գ/մ-0224

Գրականագիտական և գեղագիտական կատեգորիաներ (4 կրեդիտ)

Շաբաթական 2,25 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է՝ ուսուցանել գեղագիտական և գրականագիտական կատեգորիաների առանձնահատկությունները, կատեգորիաների հիմնական տեսակները՝ գեղեցիկն ու սգեղը, հերոսականն ու նսեմը, իդեալը և այլն, դրանց դրսևորումները հայ և համաշխարհային գրականության մեջ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կստանա գիտելիքներ՝ գեղեցիկի ու սգեղի, հերոսականի ու նսեմի, իդեալի, դրամատիկակալի ու քնարականի մասին
- ✓ կկարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,
- ✓ կտիրապետի գրականության ուսումնասիրման մեթոդներին,
- ✓ կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Թեմա 1. Գեղագիտական հիմնական կատեգորիաների համակարգումը:

Թեմա 2. Գերակա կատեգորիայի հարցը. Գեղեցիկը որպես գերակա կատեգորիա:

Թեմա 3. Գեղագիտական գույգ կատեգորիաների բնեռայնությունը: Գեղեցիկը և տգեղը, վեհը և նսեմը: Ողբերգականը և կոմիկականը: Դրամատիկականը և քնարականը:

Թեմա 4. Գեղագիտական հարաբերություն: Գեղագիտական գիտակցություն:

Թեմա 5. Գեղագիտական ճաշակ, գեղագիտական գործունեություն, գեղագիտական պահանջմունք:

2.3. Գ/մ-0248

Սիմվոլիզմի լատենտային գոյությունը նորագույն շրջանի ռուս գրականության մեջ (5 կրեդիտ)

Շաբաթական 2,75 ժամ (22 ժամ դասախոսություն, 22 ժամ գործնական), 2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ամբողջական պատկերացում տալ սիմվոլիզմի լատենտային գոյության մասին՝ որպես ռուս գրականության գիտական-գեղարվեստական բաղկացուցիչ, որի իմացությունն ապագա մանկավարժին հնարավորություն կտա իրականացնել իր խնդիրներն ու նպատակները մասնագիտական գործունեության ընթացքում:

- Ուշադրություն դարձնել ռուսական քննադատական, փիլիսոփայական և սոցիալոգիական մտքիսերտ կապի վրա, որի իմացությունը կապահովի պատմական-մշակութային, գրական-պատմական կրթությունը:

- Նպաստել ինքնուրույն, գործուն մասնակցությանը դասընթացի բովանդակության և ձևավորման յուրացման ընթացքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կունենա ընդհանրացումներ կատարելու, ինֆորմացիա ընկալելու, խնդիր առաջադրելու և իրականացնելու կարողություն,

- կկարողանա տրամաբանորեն ճիշտ կառուցել իր բանավոր և գրավոր խոսքը,

- պատրաստ կլինի կիրառելու արդի մեթոդներն ու տեխնոլոգիաները, վերլուծելու գրական-գեղարվեստական երկը, կիրառելու գրական-քննադատական նյութը տարբեր ժանրերի երկերի վերլուծության ընթացքում:

Բովանդակությունը

Թեմա 1. Հոկտեմբերից հետո սիմվոլիզմի լատենտային գոյության և զարգացման հարցի ներածություն

Թեմա 2. Ալ. Բլոկի ստեղծագործության մեջ սիմվոլիզմի լատենտային գոյությունը

Թեմա 3. Վ. Բրյուսովի ստեղծագործության մեջ սիմվոլիզմի լատենտային գոյությունը

Թեմա 4. Անդ. Բելու ստեղծագործության մեջ սիմվոլիզմի լատենտային գոյությունը

Թեմա 5. Զ. Գիպիուսի և Դմ. Մերեժկովսկու ստեղծագործության մեջ սիմվոլիզմի լատենտային գոյությունը

Թեմա 6. Բ. Պաստեռնակի ստեղծագործության մեջ սիմվոլիզմի լատենտային գոյությունը

2.4. Գ/մ-

Գրականությունը համացանցում (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (16 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական), 2-րդ կիսամյակ, քննություն:

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսուցանել համացանցային գրականության առանձնահատկությունները, ներկայացնել էլեկտրոնային գրադարանները, դրանց դասակարգումները, գործառույթները, հատկանիշներն ու հնարավորությունները, դրանք ճիշտ օգտագործելու ուղիները, էլեկտրոնային գիրքը՝ որպես տպագիր գրքի երկվորյակ՝ ընդհանրությունների ու տարբերությունների զուգադրմամբ: Կարևորվում է համընդհանուր թվայնացման պատմությունը, գրականությունը ցանց փոխադրելու գործընթացի իմացությունը, ցանցագրականության առավելությունների ու թերությունների ուսուցումը: Առանցքային նպատակներից է ժամանակակից հայ հեղինակների գործերը համացանցային միջավայրում գտնելու և ընթերցելու ուղիների մեթոդաբանության ուսուցումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է.

- ✓ ամբողջական պատկերացում ունենա համացանցի ստեղծման, զարգացման պատմության մասին.
- ✓ իմանա տպագիր և էլեկտրոնային գրքերի ընդհանրություններն ու տարբերությունները, առավելություններն ու թերությունները.
- ✓ պատկերացնի էլեկտրոնային գրադարանի կառուցվածքն ու հնարավորությունները, վիրտուալ միջավայրում գրադարան այցելելու ուղիները.
- ✓ կարողանա զանազանել ցանցագրականությունը ցանցային գրական միջավայրից.
- ✓ կարողանա այցելել էլեկտրոնային գրադարան կամ այլ գրական կայքերում գտնել որևէ գրական երկ, հոդված, գրախոսություն և այլն, ներբեռնել, ընթերցել կամ պատճենել.
- ✓ պատկերացում ունենա հայ գրականության թվայնացման գործընթացի մասին, իմանա հարուստ գրական կայքերի հասցեները, դրանցից օգտվելու եղանակները:

Բովանդակությունը

Թեմա 1. Համացանցի ստեղծումն ու զարգացման ընթացքը:

Թեմա 2. Ինտերտեքստայնություն, բնորոշումն ու մեկնաբանությունը: Հիպերտեքստը համացանցում:

Թեմա 3. Տպագիր և էլեկտրոնային գրքերի ընդհանրություններն ու տարբերությունները, առավելություններն ու թերությունները:

Թեմա 4. Համացանցի և գրականության փոխազդեցության խնդիրը:

Թեմա 5. Թվայնացման գործընթացն ու ձևաչափերը: Էլեկտրոնային գրադարաններ, դասակարգումն ու առանձնահատկությունները: Աշխարհի խոշորագույն գրադարաններն ու էլեկտրոնային գրադարանները:

Թեմա 6. Ցանցագրականության առանձնահատկությունները:

Թեմա 7. Համացանցային գրական միջավայրը Հայաստանում:

Թեմա 8. Հայալեզու գրական կայքեր:

Թեմա 9. Գրական համացանցի ապագան. կանխատեսումներ:

Թեմա 10. Էլեկտրոնային և տպագիր գրքերի պայքարը:

Թեմա 11. Ցանցի առաջատար հեղինակներն ու գրական ժանրերը:

2.5. Գ/մ- 0247

20-րդ դարի 60-ական թ.թ. «գյուղական արձակը. Վ. Ռասպուտին, Վ. Բելով, Վ. Շուկչին, Ֆ. Աբրամով... (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

20-րդ դարի 60-70-ական թվականները խորհրդային գրականության մեջ մտան որպես առավել արդյունավետ և հաջողված, որում նախկինի պես առաջատար դեր էին խաղում Ռուսաստանի գրողները: Գրական անունների շարքում քննադատները սկսեցին առանձնացնել Վ. Շուկչինի, Վ. Ռասպուտինի, Վ. Աստաֆևի, Ֆ. Աբրամովի, Ս. Զալիզինի, Գ. Ֆեդոսևի, Վ. Բելովի, Վ. Բիկովի և 'գյուղական արձակի' այլ ներկայացուցիչների անուններ:

Անհրաժեշտ է նշել, որ գրողներն իրենք չէին ընդունում «գյուղական արձակե տերմինը՝ զուգահեռներ անցկացնելով «գյուղագիրներին և դասական գրականության միջև, որտեղ գյուղի թեման առաջնային նշանակություն ուներ:

Մարդկությանը սպառնացող երկու վտանգները՝ համաշխարհային պատերազմն ու էկոլոգիական աղետը, անհանգստացնում էին ռուս 'գյուղագիրներին': Այս խնդիրները համամարդկային են: Դրանք լուծվում են երկրի անցյալը և գալիքը պատկերող կոնկրետ գործերում:

Վերոհիշյալ հեղինակների գործերը կազմում են ռուս գրականության ոսկե ֆոնդի բաղկացուցիչը, և դրանցում ներկայացված կերպարները կարող են ընդհանուր պատկերացում տալ խորհրդային շրջանի մարդկանց գաղափարական-գեղագիտական հայացքների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- ընթերցած լինի հանձնարարված գեղարվեստական և տեսական գրականությունը.

- ընդհանուր պատկերացում ունենա 60-70-ական թվականների ռուս գրականության ընթացքի և զարգացման վերաբերյալ.
- պատկերացնի առանձին հեղինակների ստեղծագործության առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը ռուս գրականության մեջ.
- կարողանա վերլուծության ենթարկել գրական գործերը.
- կարողանա մասնակցել լսարանում կազմակերպված քննարկումներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Վասիլի Բելովի ստեղծագործությունը. Պատմվածքները, «Սովորական գործ», «Հյուսնական պատմվածքները վիպակները, «Լադե ժողովածուն

Թեմա 2. Վ. Ռասպուտինի «Վերջին ժամկետը», «Հրաժեշտ Մատյորային», «Ապրիլ և հիշիր», «Ֆրանսերենի դասերը երկերը

Թեմա 3. Ֆ. Աբրամովի «Ճամփաներ-խաչուղիներ», «Երկու ձմեռ և երեք ամառ», «Տունը վեպերը

Թեմա 4. Պ. Պրոսկուրինի «Ճակատագիրը

Թեմա 5. Վ. Շուկշինի կերպարային համակարգը: Թեմայի, ժանրի և բնովանդակության ներդաշնությունը

Թեմա 6. Վ. Աստաֆևի «Արքա-ձուկը

2.6. ՌԻ/մ-0090

Տեքստի բանասիրական վերլուծություն (5 կրեդիտ)

Շաբաթական 2,75 ժամ (22 ժամ դասախոսություն, 22 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Սովորեցնել գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերի մեկնաբանմանը՝ հենվելով լեզվաբանության, գրականագիտության, ոճաբանության, պոեզիայի ուսումնասիրության ասպարեզներում ստացած գիտելիքների վրա, ի հայտ բերել միջառարկայական կապերը վերը նշված առարկաների միջև:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կունենա բավարար տեսական գիտելիքներ՝ բանասիրական վերլուծություն իրականացնելու, տեքստի կառուցվածքային պարամետրերը առանձնացնելու և գնահատելու նրանց դերը ստեղծագործության մեջ:
- ✓ կկարողանա իրագործել առաջնային և երկրորդական տեքստային գործունեություն՝ լեզվաբանական վերլուծության և ռուսաց լեզվի հիմնական ռեսուրսների իմացության հիման վրա,

- ✓ կտիրապետի տարբեր տիպի գեղարվեստական նյութի հետ աշխատելու, դրանց ժանրերի բանասիրական վերլուծության մեթոդներին և մեթոդիկաներին,
- ✓ ձեռք կրերի անհրաժեշտ ունակություններ՝ գեղարվեստական տեքստի հետ արհեստավարժ ձևով աշխատելու համար:

Բովանդակությունը

Թեմա 1. Ստեղծագործության կառուցվածքը և կոմպոզիցիան: Գեղարվեստական երկի կառուցվածքի առանձնահատկությունները ըստ ժանրերի:

Թեմա 2. Գեղարվեստական ստեղծագործության ժամանակի և տարածության արտահայտման ձևերը:

Թեմա 3. Հեղինակի դերի արտահայտության միջոցները գեղարվեստական տեքստում:

Թեմա 4. Վերնագիրը և գեղարվեստական տեքստը: Հատուկ անունների, մեջբերումների դերը գեղարվեստական ստեղծագործության մեջ:

Թեմա 5. Ռեմարկների դերը դրամատուրգիայում:

Թեմա 6. Տեքստի ժանրային առանձնահատկությունները: Բանաստեղծությունների ժանրերի գենեզիսը:

Թեմա 7. Հնչյունախաղի դերը բանաստեղծական տեքստում:

2.7. ՌԵ/Մ-0089.

Էթնոլեզվաբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2,75 ժամ (24 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական), 1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել պատկերացումներ ազգային լեզուների յուրահատկության և նրանց միջոցով ներկայացվող «աշխարհի նկարագրի մասին, ինչպես նաև ժողովուրդների միջև փոխհամաձայնությունն ապահովող մեխանիզմների մասին, որոնք կիրառվում են մշակութային արժեքների և կենսափորձի փոխանակության ընթացքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

գիտելիքներ էթնոհոգեբանության բնագավառից՝ հարստացնելով այն գիտելիքները, որոնք նա ստացել է սոց. հոգեբանության, հոգեբանական լեզվաբանության և ռուսաց լեզվի պատմության դասընթացների ժամանակ, կարողություններ՝ օգտվելու էթնոլեզվաբանության փաստերից ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ, հմտություններ՝ լեզվական փաստերի էթնոլեզվաբանական մեկնություններ ձևավորելու համար:

Բովանդակություն

Թեմա 1. Էթնոլեզվաբանությունը որպես լեզվաբանության ոլորտ:

Թեմա 2. Էթնոլեզվաբանության կոգնիտիվ ուղղվածությունը:

Թեմա 3. Էթնոլեզվաբանության հաղորդակցական ուղղվածությունը:

Թեմա 4. Էթնոլեզվաբանության արդի վիճակը և հեռանկարները:

Թեմա 5. Աշխարհի լեզվական նկարագիրը:

Թեմա 6. Էթնոլեզվաբանության դիցաբանական շերտը:

2.8. Ռուսերենի շարահյուսությունը հաղորդակցական տեսանկյունից (5 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (24 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական), 2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել որակյալ վերլուծության, մեկնաբանության, համառոտագրության հմտություններ և գիտական հետազոտությունների արդյունքների ընդհանրացման ունակություններ՝ օգտագործելով ժամանակակից մեթոդներ և մեթոդաբանություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը.

- կիմանա նախադասության և այլ շարահյուսական միավորների ուսումնասիրման հաղորդակցական մոտեցումների էությունը,
- կիմանա արտահայտությունների գործառնության արդի դասակարգումը,
- կիմանա արտահայտությունների (այդ թվում և մոդուսի) իմաստային կազմակերպման հիմնական սկզբունքները,
- կիմանա արտահայտությունների հաղորդակցական վերլուծության մեթոդիկան,
- կկարողանա բարեկիրթ ձևավորել ուրիշի խոսքը, մասնակցել և անցկացնել գիտական բանավեճեր:

Բովանդակություն

Թեմա 1. Շարահյուսություն և իմաստաբանություն. շարահյուսական երևույթների հետազոտման երկվության սկզբունքները: Թեմա 2. Ներիրավիճակային շարահյուսական միավորներ: Թեմա 3. Նախադասության ենթական: Թեմա 4. Բայի դերը նախադասության կառուցվածքում: Թեմա 5. Ստորոգյալների տիպերը: Թեմա 6. Նախադասության բաղադրամասային վերլուծությունը: Թեմա 7. Ածականացումը, բայականացումը և անորոշ դերբայը նախադասության շարահյուսությունում: Թեմա 8. Ռեմայի դերը տեքստի կազմակերպման գործում: Թեմա 9. Խոսքի հաղորդակցական տիպեր: Թեմա 10. Մոդուսը և դիկտումը նախադասության իմաստաբանական դաշտում: Թեմա 11. Մոդուսային ռեգիստր:

2.9. ՌԷ/Մ-

Շարահյուսության արդիական հիմնահարցեր (4 կրեդիտ)

Շաբաթական 2,875 ժամ (22 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին լեզվաբանական տեսությունների զարգացման դինամիկային՝ շեշտադրելով շարահյուսական տեսությունների զարգացումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ ձեռք կրերի գիտելիքներ տարբեր լեզվաբանական դպրոցների և ուղղությունների փուլերի և բովանդակության վերաբերյալ,
- ✓ կկարողանա դասակարգել ստացած գիտելիքները և օգտագործել դրանք ապագա գործնական և գիտահետազոտական գործունեության ընթացքում, իմաստաբանական, կառուցվածքային և ավանդական մոտեցումների զանազանության մեջ ընտրել վերլուծության և նկարագրության օպտիմալ տարբերակը, կիրառել ստացած գիտելիքները գործնական նպատակներով:

Բովանդակություն

Թեմա 1. Լեզվի միավորների հետազոտման գործառնության մոտեցումը՝ ավանդական լեզվաբանության հարացույցի փոփոխությունը դեպի իմաստաբանություն և պրագմատիկա:

Թեմա 2. Լեզվական միավորների նկարագրության երեք տեսանկյունները. ձևական, իմաստաբանական և հաղորդակցական:

Թեմա 3. Մոդուսը և դիկտումը նախադասության իմաստաբանական դաշտում:

Թեմա 4. Նախադասության անվանական տեսանկյունը:

Թեմա 5. Ռուսերենի նախադասությունների կառուցվածքային սխեմաները:

Թեմա 6. Հարացույց հասկացության կայացումը շարահյուսության մեջ:

Թեմա 7. Դերիվացիոն հարացույցը:

Թեմա 8. Նախադասություններ և արտահայտություններ:

Թեմա 9. Արտահայտություններ և դիսկուրս:

Թեմա 10. Արտահայտությունները, դիսկուրսը և արտալեզվական իրադրությունը:

Թեմա 11. Պրեսուպոզիցիան որպես հաջող հաղորդակցության պայման:

Թեմա 12. Պերֆորմատիվներ և հաստատույթներ:

Ժամանակակից լեզվաբանության հիմնախնդիրներ (4 կրեդիտ)

Շաբաթական 2,875 ժամ (22 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական), 3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է գնահատել ժամանակակից լեզվաբանության հեռանկարները ոչ միայն մոտ ժամանակահատվածում, այլև ապագայում:

Դասընթացի ավարտին ուսանողը

- կիմանա ինչպես է կատարվում լեզվաբանական գաղափարների զարգացումը 20-21-րդ դարերում
- կիմանա ինչպես է փոխվում լեզվի պատկերը և ինչ դեր է խաղում այն ժամանակակից հասարակության կյանքում
- կիմանա լեզվական հաղորդակցման օրենքները, ինչպես նաև հասարակության և սոցիալական միջավայրի օրենքները
- կկարողանա վերլուծել լեզվական նյութերը ժամանակակից լեզվաբանական հայեցակարգերի շրջանակներում մշակված մեթոդների միջոցով
- կկարողանա գործածել այն եզրությունները և հասկացությունները, որոնք փոփոխության են ենթարկվում գիտության հարացույցի զարգացման հետևանքով
- կկարողանա քննադատորեն գնահատել կոնկրետ լեզվաբանական մեթոդների արժեքները և սահմանափակումները
- կտիրապետի ժամանակակից լեզվաբանության տերմինաբանական և հասկացութային համակարգին
- կտիրապետի խոսքային հաղորդակցության օրենքներին
- կտիրապետի համակարգչային տեխնոլոգիաների կիրառությանը լեզվաբանական գիտության համատեքստում

Բովանդակություն

Թեմա 1. Լեզվաբանական գաղափարների զարգացումը 20-րդ դարի 2-րդ կեսում: Թեմա 2. ն. Խոսակցության վերափոխական քերականության մոդելը: Թեմա 3. Գիտական հարացույթի հասկացությունը: Խոսքագիտությունը որպես հետազոտությունների հատուկ ոլորտ: Թեմա 4. Լեզվապատկերումը 20-րդ դարի վերջում: Թեմա 5. 20-րդ դարի վերջի գերիշխող լեզվաբանական տեսությունները: Թեմա 6. Խոսույթի վերլուծությունը որպես լեզվաբանական ուղղություն: Խոսույթի և հասարակության փոխհարաբերությունները: Թեմա 7. Ճանաչողական լեզվաբանության առանձնահատկությունները: Հասկացույթը

որպես հետազոտությունների կարևորագույն օբյեկտ ճանաչողական լեզվաբանության մեջ: Թեմա 8. Ոճը – կառուցվածքը – լեզվի գործառնության ծավալը: Թեմա 9. Ժամանակակից ոճաբանության հիմնական ուղղությունները: Գեղարվեստական գրականության ոճաբանությունը որպես ճանաչողական և հաղորդակցական ոճաբանությունների սինթեզ: Թեմա 10. Արտատեքստուալություն: Տեքստը և արտատեքստը: Թեմա 11. Կիրառական լեզվաբանությունը 20-րդ դարի վերջում:

2. ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱՄԱՍ

Կամրնտրական դասընթաց (3 կրեդիտ)

Շաբաթական 1,875 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար) 1-ին կիսամյակ, ստուգարք

Լեզվաբանատրամաբանության ընդհանուր հարցեր

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել լեզվական ձևի և նրա բովանդակություն հանդիսացող մտային պատկերների փոխադարձ կապի յուրահասկությունը: Հիշյալ գոյերի միասնության շնորհիվ ձևավորվում է նոր կառույց, նյութափոխակերպական գոյ, առանց որի աշխարհի գիտական պատկեր ստեղծել անհնարին է: Միայն այս ցիկլի շրջանակներում է հնարավոր մոտավոր պատկերացում կազմել լեզու-մտածողություն, մտածողություն-լեզու կառույցների՝ որպես մարդու գոյության ու գործառնության վճռորոշության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Ուսանողը առավել խոր պատկերացում կկազմի ոչ միայն լեզվի և մտածողության, այլև լեզվաբանության և տրամաբանության միասնության, նրանց ֆունկցիոնալ առանձնահատկությունների, որպես մտածող և խոսող, ճանաչող և վերափոխող էակի մասին:

2. Կհասկանա, թե ինչու չկան արտալեզվական, լեզվամտածողությունից զատ գործոններ, որոնք բնորոշ են միայն մարդուն: Այս գործոնների յուրացումը մարդու էական հատկություններն են, այդ իմաստով էլ մարդը ոչ միայն զգայող, այլ նաև լեզվամտային գործունեությամբ օժտված էակ է:

3. Ուսանողը ամբողջական պատկերացում կկազմի լեզվամտածողության՝ որպես մարդկային գործունեության բարձրագույն ձևի, գոյաբանական, իմացաբանական, հաղորդակցական առանձնահատկությունների և դրանք ուսումնասիրող գիտությունների (լեզվաբանության և տրամաբանության) առանձնահատկությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտությունը որպես հոգևոր գործունեություն: Թեմա 2. Լեզու և իմացություն: Թեմա 3. Գիտակցություն, մտածողություն, լեզու: Թեմա 4. Լեզվամտածողությունը որպես յուրահատուկ գոյակցություն: Թեմա 5. Լեզու, խոսք, մտածողություն և գիտակցություն: Թեմա 6. Լեզվական ինֆորմացիյա և գիտելիք:

Փ/մ 1236 Լեզվամտածողության հիմունքներ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողին տեղեկացնել լեզվական ձևի և նրա բովանդակություն հանդիսացող մտային պատկերների փոխադարձ կապի յուրահատկությունը: Հիշյալ հարաբերական գոյերի միասնության շնորհիվ է ձևավորվում նոր կառույց, նյութաիդեալական գոյ, առանց որի աշխարհի պատկեր ստեղծել հնարավոր չէ: Միայն այս ցիկլի շրջանակներում է հնարավոր մոտավոր պատկերացում կազմել լեզու-մտածողություն, մտածողություն-լեզու կառույցների նախահիմքի և նրա տարրերի վճռորոշության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Ուսանողը առավել խոր պատկերացում կկազմի լեզվի և մտածողության, հետևաբար լեզվաբանության և տրամաբանության միասնության, նրանց ֆունկցիոնալ առանձնահատկությունների մասին:

2. Կհասկանա, թե ինչու չկան արտալեզվական, լեզվական համակարգի՝ մտածողությունից զատ ֆունկցիոնալ առանձնահատկություններ: Այլ կերպ լեզվական

համակարգից զատ մտածողություն՝ որպես իրականության արտացոլման բարձրագույն ձև, գոյություն չունի:

3. Ուսանողը կհասկանա, ամբողջական պատկերացում կկազմի լեզվամտածողության՝ որպես մարդկային գործունեության բարձրագույն տեսակի, գոյաբանական, իմացաբանական, հաղորդակցական ֆունկցիաների առանձնահատկությունների էությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտությունը որպես հոգևոր գործունեություն: Թեմա 2. Լեզու և իմացություն: Թեմա 3. Գիտակցություն, մտածողություն, լեզու: Թեմա 4. Լեզվամտածողությունը որպես յուրահատուկ գոյակցություն: Թեմա 5. Լեզու, խոսք և մտածողություն:

Կամընտրական դասընթաց (5 կրեդիտ)

Շաբաթական 2,75 ժամ (22 ժամ դասախոսություն, 22 ժամ գործնական) 2-րդ կիսամյակ, ստուգարք

Անվանագիտություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին անվանագիտության հիմնական օրինաչափություններին, ցույց տալ առարկայի տեղը լեզվաբանական առարկաների համակարգում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կստանա գիտելիքներ՝ հատուկ անունների հիմնական դասակարգման բնագավառից,
- ✓ կկարողանա տարբերել սլավոնական և փոխառնված եկեղեցական և ոչ եկեղեցական անունները,
- ✓ ձեռք կբերի հմտություններ՝ կիրառելու ստացած գիտելիքները գործնականում, ունակություններ՝ ներդնելու ստացած գիտելիքները դասավանդման գործընթացում (օրինակ, գեղարվեստական երկերի հերոսների անունների վերլուծության ժամանակ):

Բովանդակություն

Թեմա 1. Անվանագիտությունը որպես բառագիտության հատուկ բաժին:

Թեմա 2. Ռուս անվանագիտությունը ծագումնաբանության տեսանկյունից. սլավոնական անուններ:

Թեմա 3. Ռուս անվանագիտությունը ծագումնաբանության տեսանկյունից. փոխառնված անուններ:

Թեմա 4. Հին ռուսակա ներընտանեկան անուններ:

Թեմա 5. Հին ռուսական արտաընտանեկան անուններ: Մականուններ:

Թեմա 6. Ռուսական եկեղեցական անուններ:

Թեմա 7. Ռուսական ոչ եկեղեցական անուններ:

Թեմա 8. Անունը և նրա միատիկական ակունքները:

Թեմա 9. Դիցաբանական անվանագիտություն:

Թեմա 10. Անվանումները ռուս գրականությունում:

Թեմա 11. Կեղծանվանագիտություն:

3.3. Ռ/մ-0091

Գենդերային լեզվաբանություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին լեզվաբանական նկարագրությունների սոցիալական բնույթին, գենդերային լեզվաբանության գաղափարներին և մեթոդներին, բացահայտել լեզվում սեռի հիմնախնդրի ժամանակակից հայեցակարգի երկու հիմնական ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ կատանա գիտելիքներ՝ գենդերային հետազոտությունների տեսության մասին, կրնկալի գենդերլեկտ, գենդերային դիսպլեյ, գենդերային դերեր, գենդերային սոցիալիզացում հասկացությունները:
- ✓ կկարողանա վերլուծել դարձվածքները և ասույթները գենդերային տեսանկյունից, ինչպես նաև կրնկալի գենդերի արտացոլումը լեզվաաշխարհապատկերում,
- ✓ ձեռք կբերի հմտություններ՝ տարբերակելու քերականական սեռը և գենդերային տեսանկյունը լեզվում, ունակություններ՝ կատարելու տեքստերի իրական երևույթների գենդերային վերլուծություն:

Բովանդակություն

Թեմա 1. Լեզվաբանական նկարագրության սոցիալական տեսանկյուն. Սոցիոլեզվաբանության, լեզվամշակութաբանության, պրագմատիկայի, հոգելեզվաբանության, հաղորդակցության և խոսույթի տեսություն:

Թեմա 2. Ֆեմինիստական լեզվաբանության գաղափարներն ու մեթոդները:

Թեմա 3. Լեզուն՝ որպես հասարակության գենդերային մշակույթի արտացոլում:

Թեմա 4. Լեզուն՝ որպես գենդերային ինքնության կազմավորման գործիք:

Թեմա 5. Լեզուն՝ որպես կոլեկտիվ գենդերային նույնության ստեղծման միջոց:

Թեմա 6. Դ. Թաննենի երկու մշակույթների և երկու հաղորդակցման ռազմավարությունների տեսությունը:

Թեմա 7. Գենդերը, մշակույթը, հաղորդակցությունը, տեքստը՝ որպես հատման հնարավոր դաշտեր:

Թեմա 8. Միջմշակութային, լեզվամշակութաբանական հետազոտություններ:

Թեմա 9. Ինտերակտիվ՝ նախօրոք հավաքված նյութերով. առնականության/կանացիության լեզվական դրոշմները:

1.1. Ու/մ-0087

Բառակազմության արդի հիմնահարցեր

Դասընթացի նպատակը

Ծանոթացնել ուսանողներին ռուսերենի բառակազմական ձևերին ու միջոցներին, տալ պատկերացում բառակազմական և ձևութաբանական վերլուծության մասին: Ներկայացնել տարբեր բնույթի հնչութաբանական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում բառակազմության ժամանակ, ձևույթների շփման գծում և այլն:

Տվյալ դասընթացի ընթացքում ուսանողները կծանոթանան նաև բանաստեղծական բառակազմության հարցերին, մասնավորապես Վ. Խլեբնիկովի բառակազմական փնտրտուկներին:

Կրթական արդյունքները.

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը կստանա.

- ✓ գիտելիքներ՝ ռուսերենի բառակազմական սկզբունքների, նրանց առանձնահատկությունների մասին, պատկերացում կկազմի բառակազմական բների, շարքերի, ինչպես նաև բառերի ծագումնաբանության, ԺՌԼ-ի բառակազմության մասին համապարփակ պատկերացում ունենալու համար,
- ✓ կարողություններ՝ վերլուծություն կատարելու ռուսերենի բառակազմական, ծագումնաբանական, սերող և սերվող հիմքերը որոշելու համար,
- ✓ հմտություններ՝ բառակազմական սկզբունքների տեսակների ձևութաբանական մոդելների կիրառման հարցում:

Բովանդակություն

Թեմա 1. Մինիբոն և պատմական բառակազմություն: Բառի բառակազմական և ձևութաբանական վերլուծություն: Ձևույթների պարզեցումը և վերաձևումը:

Թեմա 2. Ռուսերենի ձևույթների դասակարգումը (նախածանցներ, արմատներ, բառահիմքեր և այլն), դրանց առանձնահատկությունները և բառակազմական ներուժը:

Թեմա 3. Սերվող հիմքեր բառահիմքի եզակի մասերը:

Թեմա 4. Բառակազմության հնչութաձևութաբանական առանձնահատկությունները ԺՌԼ-ում:

- Թեմա 5.** Ռուսերենի խոսքի մասերի բառակազմական հնարավորությունները: Հնչյունափոխությունները ձևային և բառակազմական կարի վրա:
- Թեմա 6.** Բառակազմության միջոցները. ածանցում, հապավում և այլն:
- Թեմա 7.** Դիպլոմատիկ բառակազմություն:
- Թեմա 8.** Հիմնական խոսքի մասերի բառակազմությունը:

Կամրնտրական դասընթաց (5 կրեդիտ)

Շաբաթական 3,75 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական) 3-րդ կիսամյակ, ստուգարք

3.4. ՌԻ/մ-0086

Ռուսաց և հայոց լեզուների համեմատական տիպաբանություն

Նպատակը

- ✓ Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ գիտելիքներ՝ ռուսաց լեզվի նախադասության կառուցվածքային, իմաստաբանական և գործառնային առանձնահատկությունների մասին՝ ի համեմատություն հայերենի:
- ✓ Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
- ✓ կստանա գիտելիքներ՝ լեզուների նմանություններն ու տարբերությունների մասին՝ համաժամանակյա կտրվածքում,
- ✓ կկանոդանա գտնել հիմքեր համադրվող նկարագրության համար,
- ✓ ձևեր կբերի անհրաժեշտ ունակություններ՝ կիրառելու ստացված գիտելիքները դասավանդման գործընթացում:

Բովանդակություն

- Թեմա 1.** Ազգային մենթալիտետը և աշխարհի լեզվական պատկերը:
- Թեմա 2.** Աշխարհի միջգիտական պատկերները հայկական դարձվածաբանությունում:
- Թեմա 3.** Լեզուների տիպաբանական դասակարգումը:
- Թեմա 4.** Հնդեվրոպական նախադասությունը:
- Թեմա 5.** Հնդեվրոպական նախադասության անվանական կառուցվածքը: Էգատիվ նախադասությունները:
- Թեմա 6.** Հոլովային շարահյուսության տարրերը:
- Թեմա 7.** Ներգործիական հոլովի շարահյուսությունը:
- Թեմա 8.** Ներգործիական կիսաստորոգելի նախադասությունները գեղչված ենթակայով:
- Թեմա 9.** Ա.Մ. Պեշկովսկու տեսությունը:
- Թեմա 10.** Գենետիվ և լոկատիվ լեզուները նախադասության երկրորդական անդամների տիպաբանությունը:
- Թեմա 11.** Ռուսերենի և հայերենի նախադասությունների համադրվող բնույթը:

Տեքստի լեզվաբանական դիսկուրսը

Նպատակը

Դասընթացի նպատակն է խորացնել բանասեր մասնագետների և բակալավրերի մոտ ձևավորված գիտելիքները, խոսույթի՝ որպես լեզվաբանական բարձրագույն իրականության գործառույթային բնույթը տարատեսակ տեքստերի օրինակներով:

Դասընթացի ավարտին ուսանողը.

- կլիմանա տեքստի լեզվաբանական վերլուծության ոլորտի հիմնական դրույթները և հայեցակարգերը
- կլիմանա տեքստային խոսույթի նկարագրման արդի սկզբունքները
- կկարողանա կիրառել տեքստային խոսույթի տեսության և տեքստերի վերարտադրման ոլորտում ձեռք բերված գիտելիքները
- կկարողանա անցկացնել բազմաժանրային բնույթ ունեցող տեքստային խոսույթների տեղայնացված հետազոտություններ փաստագրված եզրակացությունների սահմանմամբ
- ազատ կտիրապետի գրական ռուսաց լեզվին
- կտիրապետի խոսքային ստեղծագործությունների վերլուծության հաղորդակցական-պրագմատիկ մեթոդներին
- կտիրապետի դասակարգման և մոդելավորման մեթոդներին

Բովանդակություն

Թեմա 1. Տեքստի լեզվաբանական խոսույթը՝ բնորոշման մոտեցումներ: Տեքստի լեզվաբանական խոսույթը խոսույթների այլ ձևերի շարքում: Թեմա 2. Տեքստի լեզվաբանական խոսույթի ուսումնասիրության համալիր մոտեցումները: Թեմա 3. Տեղայնացման կարգի արտահայտումը տեքստային խոսույթում: Թեմա 4. Տեքստի խոսույթը որպես հումանիտար գիտությունների օբյեկտ: Թեմա 5. Տեքստային խոսույթը տեխնոլոգիական տեսանկյունից: Թեմա 6. Լեզվային անհատականությունը տեքստային խոսույթում: Թեմա 7. Տեքստային խոսույթի հաղորդակցական վերլուծությունը: Թեմա 8. Տեքստային խոսույթի արտաբերական վերլուծություն: Թեմա 9. Տեքստային խոսույթի համալիր վերլուծությունը՝ մոտեցումներ և մեթոդներ:

Իմաստաբանության հիմնախնդիրներ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ծանոթացնել իմաստաբանության հիմունքներին որպես ժամանակակալից լեզվաբանության կարևորագույն ոլորտի, պատկերացում տալ

իմաստաբանության լեզվաբանական և արտալեզվաբանական գիտությունների կապերի, ինչպես նաև նրա առնչությունը նշանաբանության և վերջինիս ուղղությունների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողը

- կիմանա բառագիտական իմաստաբանության մեթոդներն ու հնարքները
- լեզվի իմաստաբանական մակարդակները (բառակազմական, բառային, քերականական)
- կկարողանա իրականացնել տարբեր լեզվական միավորների (ձևույթ, բառ, նախադասություն, տեքստ և այլն) իմաստաբանական վերլուծություն
- կկարողանա կատարել տարբեր տեքստերի իմաստաբանական վերլուծություն
- կկարողանա իրականացնել տեքստերի դասարակում
- կկարողանա առանձնացնել տեքստի կառուցվածքը և դրանց տեսակներն
- կտիրապետի իմաստաբանական գիտական հետազոտության մեթոդներին և հնարքներին, գիտական նկարագրության մեթոդաբանական սկզբունքներին և իմաստաբանակն հետազոտության մեթոդներին
- կտիրապետի իմաստաբանության որպես գիտության զարգացման և ժամանակակից ուղղություններին (ռուսաց լեզվի օրինակով)

Բովանդակություն

Թեմա 1. Իմաստաբանությունը որպես ժամանակակից լեզվաբանության ոլորտ: Իմաստաբանության լեզվաբանական և արտալեզվաբանական կապերը: Իմաստաբանությունը և նշանաբանությունը, նշանաբանության կայացման հիմնական փուլերը: Թեմա 2. Իմաստաբանության մեթոդներն ու հնարքները: Լեզվական նշանի գաղափարը (պատկերներ, սիմվոլներ, ցուցիչ): Թեմա 3. Նշանը և նշանակությունը: Լեզվական նշանը որպես ձևի և իմաստի միասնություն: Բառի բառագիտական նշանակությունը, նրա տեսակները: Թեմա 4. Բառապաշարի իմաստաբանական ուսումնասիրում: Թեմա 5. Իմաստաբանական դաշտի գաղափարը, նրա կենտրոնը և շրջագիծը: Թեմա 5. Իմաստաբանությունը և բառակազմությունը: Ձևույթաբանական իմաստաբանություն: Ձևույթների հարացութային և շարութային դրսևորումները: Թեմա 6. Արտահայտության իմաստաբանությունը: Թեմա 7. Տեքստը և հասկացույթը: Տեքստերի տիպաբանությունը: Թեմա 8. Հասկացույթի գաղափարը: Ճանաչողական լեզվաբանությունը որպես ժամանակակից լեզվաբանության ուղղություն: Աշխարհի լեզվապատկեր: Սեպիր- Ուորֆի հայեցակարգը:

Կամընտրական դասընթաց (5 կրեդիտ)

Շաբաթական 2,75 ժամ (22 ժամ դասախոսություն, 22 ժամ գործնական) 2-րդ կիսամյակ, ստուգարք

20- րդ դարի լատինաամերիկյան գրականության ուրվագծեր

Նպատակը

Բացահայտել լատինաամերիկյան գրականության հիմնական առանձնահատկությունները, նրա զարգացման փուլերը՝ կապված համաշխարհային գրականության զարգացման յուրահատկությունների, ինչպես նաև լատինաամերիկյան ժողովուրդների զարգացման հետ, բացահայտել այս գրականության նորույթն ու նպաստը գրականության համապատկերում:

Մագիստրանտներին հաղորդել տեսական և գործնական գիտելիքներ՝ նրանց զինելով ապագա գործունեության ընթացքում ուղենիշ մեթոդիկայով:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացն ավարտելուց հետո ուսանողը պետք է ընթերցած լինի հանձնարարված գեղարվեստական և գրականագիտական գրականությունը, լիարժեք պատկերացում ունենա լատինաամերիկյան գրականության պատմության բոլոր շրջադարձային փուլերի մասին, կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, որոշ գիտական հարցերի վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարել:

Բովանդակությունը

Թեմա 1. *Ներածություն:* Լատինաամերիկյան գրականության առանձնահատկությունները և զարգացման հիմնական բնութագիրը:

Թեմա 2. Լատինաամերիկյան վեպը 20-րդ դարի 1-ին կեսին: Գրական ուղղություններ:

Թեմա 3. Նոր լատինաամերիկյան վեպը: Մոզական ռեալիզմ: Գարսիա Մարկես:

Թեմա 4. Բորխեսի փիլիսոփայական պատմվածքները: Բորխեսը և պոստմոդեռնիզմը:

Թեմա 5. Լատինաամերիկյան հակադիկտատորական արձակը: Գարսիա Մարկես, Աստուրիաս:

Թեմա 6. Խաղը որպես հնար պոստմոդեռնիզմի գրականության մեջ: Խ. Կորտասար

Թեմա 7. Մեսար Վայլեխոն՝ Պերուի բանաստեղծ:

Թեմա 8. Պարլո Ներուդայի պոեզիան:

Թեմա 9. 50-60-ական թվականների արձակի միտումները: Կառլոս Ֆունետես, Մարիո Վարգաս Լյոսա, Մանուել:

3.8. Գ/մ-

Միստիկան ռուս գրականության մեջ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ հանդուրժողականության և մշակութային իրազեկվածության՝ ուսուցչի համար երկու կարևորագույն որակների ձևավորումը:

Ուսումնական դասընթացը կոչված է.

- ծանոթացնելու միստիկական հիմնական հայեցակարգերին.
- ծանոթացնելու գրական միստիկայի տարաբնույթ ժանրերին.
- դիտարկելու ռուս հեղինակների երկերում միստիկ կերպարի առանձնահատկությունները.
- դիտարկելու ռուս հեղինակների երկերում միստիկական գիտակցության և փորձի յուրահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ծանոթությունը միստիկ գրականության ժանրային յուրահատկությանը,
- ծանոթությունը հիմնական միստիկական հոսանքների ասպեկտներին, դրանց պատմությանն ու էթիկային.
- միստիկականի դինամիկայի դիտարկումը 19-20-րդ դարերի գրականության մեջ:

Բովանդակությունը

Թեմա 1. Միստիկայի առաջացումն ու նշանակությունը հասարակության համար, դրա արտացոլումը գրականության մեջ:

Թեմա 2. Միստիկան ռոմանտիկ գրողների ստեղծագործություններում:

Թեմա 3. Միստիկան ռոմանտիկական հայեցակարգերի ճգնաժամի շրջանում:

Թեմա 4. «Ռացիոնալիստական միստիկան»:

Թեմա 5. Միմվոլիզմի դարաշրջանի միստիկական բացահայտումները:

Թեմա 6. Միմվոլիզմի նահանջը և միստիկական նոր բացահայտումները:

Թեմա 7. Միստիկան խորհրդային գրականության մեջ:

Թեմա 8. Հետխորհրդային գրականության միստիկական տեղագրությունը:

3.9. Գ/մ-

Կինեմատոգրաֆիկությունը որպես ժամանակակից գրականության զարգացման անհատական ոճի դոմինանտ

Նպատակը

Դասընթացի նպատակը ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողությունների զարգացումն է, ծանոթացումը ժամանակակից գրական պրոցեսի հետ, կինոյի և գրականության հարաբերություններ և համընկնումների պարզաբանումը: Առաջադրվում է այն թեզը, որ կինոդրամատուրգիան դրամատիկական սեռի նորագոյացություն է: Իրականացվում է ռուս գրականության համապատկերում կինոմատոգրաֆիկայության տեղի ու դերի պարզաբանումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտի արդյունքը պետք է լինի.

- ծանոթությունը գրականության և կինոյի ժանրային յուրահատկություններին,.
- ծանոթությունը գրականության և կինոյի դրսևորման տեխնիկական ու ոճական առանձնահատկություններին, դրանց պատմությանն ու փոխներթափանցումներին.
- գրական երկերի կինոբեմականացման փորձին ու պատմությանը, ռուս նշանավոր հեղինակների երկերի բեմականացմանը,
- պատկերացում կազմի կինոդրամատուրգիայի ժանրային և արտահայտչական յուրահատկությունների վերաբերյալ:

Բովանդակությունը

Թեմա 1. Գրական կինեմատոգրաֆիկայություն,

Թեմա 2. Գրի վերլուծական ոճի յուրահատկությունները,

Թեմա 3. Կինոյի և գրականության ինտերակտիվ փոխազդեցությունների միջոցները,

Թեմա 4. Դասական երկերի կինոբեմականացումները. բնագիր և կինոբնագիր,

Թեմա 5. Խորհրդային կինեմատոգրաֆը և գրականությունը,

Թեմա 6. Հետխորհրդային կինեմատոգրաֆը և արդի գրական պրոցեսը:

Կամընտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (26 ժամ դասախոսություն, 22 ժամ գործնական) 3-րդ կիսամյակ, ստուգարք

3.11. Գ/մ-

Վլ. Նաբոկովի նշանի տակ. դիմակ և աշխարհ

Նպատակը

Դասընթացի նպատակը ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողությունների զարգացումն է, ծանոթացումը Վլ. Նաբոկովի թողած գրական ավանդույթին, ռուս գրականության համապատկերում Վլ. Նաբոկովի տեղի ու դերի պարզաբանումը, և նրա ստեղծագործության ազդեցությունը ռուս գրականության վրա:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա հստակ ու ամբողջական պատկերացում կազմել ռուս արտագաղթի գրականության առաջին ալջքի ամենանշանավոր ներկայացուցչի՝ Վլ. Նաբոկովի ստեղծագործության զարգացման միտումների և առանձնահատկությունների վերաբերյալ, վերլուծել բնագիր և ճշտել Վլադիմիր Նաբոկովի տեղն ու դերը ռուս գրական համապատկերում:

Պարզաբանել Վլ. Նաբոկովի օտարալեզու ստեղծագործության յուրահատկությունները:

Բովանդակությունը

Թեմա 1. Նաբոկովի նշանի տակ,

Թեմա 2. Նաբոկով. դիմակ և միֆ,

Թեմա 3. Նաբոկով «Դասական խաղալը»,

Թեմա 4. Նաբոկովի դները և Կրուսանովի հրեշտակները. համեմատական վերլուծություն,

Թեմա 5. Նաբոկովի «Լոլիտան»,

Թեմա 6. Պուշկինյան ենթատեքստերը Նաբոկովի «Մահապատժի հրավերե վեպում:

3.10. Գ/մ-

Ռուս արտագաղթի գրականության երրորդ ալիքը. Ի. Բրոդսկի, Ս. Դովլաթով

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ռուս արտագաղթի գրականության երրորդ ալիքի առավել ընդգծված հեղինակների՝ Ի. Բրոդսկու և Ս. Դովլաթովի ստեղծագործություններին, բացահայտել նրանց նպաստը ռուս և համաշխարհային գրականությունների համապատկերում:

Կրթական արդյունքները

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա հստակ ու ամբողջական պատկերացում կազմել արդի ռուս արտագաղթի գրականության զարգացման միտումների և առանձնահատկությունների վերաբերյալ, վերլուծել բնագիր և ճշտել նշված հեղինակների տեղն ու դերը ռուս գրական համապատկերում և արդի գրական պրոցեսում:

Բովանդակությունը

1. Վերադարձված գրականություն. Ժառանգության յուրահատկությունը,
2. «Կյանքի այն կողմումե. Ի. Բրոդսկու և Ս. Դովլաթովի ստեղծագործությունների գաղափարական-գեղարվեստական յուրահատկությունները,
3. Ռուսական արտասահամանի արձակը և ռուսական հետմոդեռնիզմի գրականությունը,
4. Ավանդականն ու նորը Ի. Բրոդսկու ռուսերեն պոեզիայում,
5. 20-րդ դարավերջի ռուսական պոեզիայի բառապաշարը:

3.7. Գ/մ-

Հայ-ռուսական գրական կապեր

Նպատակը

Արվեստագետի համար ազգայինը հիմք է, որ կերտում է հոգեբանությունը, ձևավորում իբրև անհատականությունը : Ազգային գործոնը մտածողությունը ձևավորող, հղկող և վերափոխելու ընդունակ ուժ է, որն ազդում է առանց ջանք թափելու՞ Արվեստի մեջ մնայուն հետք թողնելու համար, սակայն, անհրաժեշտ է ավելի լայն, մտքի թռիչքը չսահմանափակող մտածողություն:

Ազգայինից համազգայինին գնալու ճանապարհն է արվեստագետի ուղին: Այս իմաստով հայ-ռուսական կապերը, որ դարերի պատմություն ունեն, ազգայինի ու համամարդկայինի հարաբերման յուրահատուկ ազդակ ու հնարավորություն են տալիս, և հայ-ռուսական գրական կապերի իմացությունը ինչ-որ տեղ դառնում է մեզ համար գոնե անհրաժեշտ ու պարտադիր:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է լիարժեք պատկերացում կազմի հայ-ռուսական գրական կապերի և արդի ընթացքի վերաբերյալ, իմանա հանգուցային

իրողությունները և հեղինակներին ու ստեղծագործությունները, պատկերացնի փոխառնչությունները և հնարավոր փոխազդեցությունները:

Բովանդակությունը

Թեմա 1. Վ. Բրյուսովի կազմած «Պոեզիա Արմենիի և ժողովածուն

Թեմա 2. Մ. Գորկին և հայ գրականությունը

Թեմա 3. Հովհ. Թումանյանը և ռուս գրականությունը

Թեմա 4. Ավ. Իսահակյանը և ռուս գրականությունը

Թեմա 5. Վ. Տերյանը և ռուս գրականությունը

Թեմա 6. Եղ. Չարենցը և ռուս գրականությունը

Թեմա 7. Պ. Սևակ և Վլ. Մայակովսկի

Թեմա 8. Պ. Սևակ և Ե. Եվտուշենկո

Թեմա 9. Ն. Տիխոնովը, Կ. Չուկովսկին, Օսիպ Մանդելշտամը, Միխայիլ Դուդինը, Աննա Ախմատովան, Լև Օզերովը և հայոց պոեզիան

Թեմա 10. Հր. Մաթևոսյան և Անդրեյ Բիտով

Թեմա 11. Հայ պոեզիայի այլ հեղինակների գործերի թարգմանություններ

Թեմա 12. Ռուս դասականների արձակ գործերի հայերեն թարգմանությունները

Թեմա 13. Ռուս դասականների չափածո գործերի հայերեն թարգմանությունները

Թեմա 14. Ռուս դրամատուրգիան հայերեն թարգմանություններում

Թեմա 15. Հայ-ռուսական կապերի արդի փուլը:

IV. Այլ բաղադրիչներ

4.1. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինար (12 կրեդիտ) ` 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կիսամյակ

4.2. Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական ատենախոսության թեմայով (15 կրեդիտ) ` 2-րդ (3 կրեդիտ), 3-րդ (6 կրեդիտ), 4-րդ (6 կրեդիտ) կիսամյակներ:

4.3. Գիտահետազոտական պրակտիկա (3 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ

4.4. Գիտամանկավարժական պրակտիկա (6 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ

4.5. Մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն (12 կրեդիտ) ` 4-րդ կիսամյակ: